Հաստատում եմ՝
Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
տնօրեն Վ. Ա. Տեր-Ղևոնդյան

ԿԱՐԾԻՔ

Հովհաննես Վահագնի Հովհաննիսյանի «Վաղ քրիստոնեական դավանաբանական վեճերի կրոնագիտական վերլուծություն (II դարի II կես – V դարի I քառորդ)» Թ.00.05 «Կրոնի տեսություն և պատմություն (պատմական գիտություններ)» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին:

Կարծիքը հաստատվել է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի «Թարգմանական մատենագրության» բաժնի 2020 թ. հունվարի 25-ի նիստում (արձանագրություն թիվ 1):

Նիստին մասնակցում էին. – բ.գ.դ. Գ. Մուրադյանը (բաժնի վարիչ), փ.գ.թ. Օ. Վարդազարյանը, արվեստի պատմության դոկտոր (Փարիզ) Ն. Ղարիբյանը (Արվեստի պատմության և գրչության կենտրոնների ուսումնասիրման բաժին), պ.գ.թ. Ա. Մելքոնյանը (5-14-րդ դարերի հայերեն բնագրերի ուսումնասիրման բաժին), փ.գ.թ. Ռ. Քոչարյանը, բ.գ.թ. Տ. Սիրունյանը, Ա. Ավետիսյանը (կրտսեր գիտաշխատող):

Արտահայտվեցին. – բ.գ.դ. Գ. Մուրադյանը, պ.գ.թ. Ա. Մելքոնյանը, արվեստի պատմության դոկտոր (Փարիզ) Ն. Ղարիբյանը:

Նշեցին, որ մարդկային մտքի պատմությունն ուսումնասիրության համար ամենաբարդ բնագավառներից է: Հովհաննես Հովհաննիսյանի «Վաղ քրիստոնեական դավանաբանական վեճերի կրոնագիտական վերլուծություն (II դարի II կես – V դարի I քառորդ)» ատենախոսությունն այդ բնագավառի հաջողված, ինչպես նաև՝ միջնադարագետ հայագետների համար արժեքավոր աշխատություն է:

Հայ հին գրականության, աստվածաբանության և գիտական մտքի պատմությունը շոշափելի է դառնում 5-րդ դարից, և հայագետներն իսկույն առնչվում են 5-րդ դարի կեսերին ողջ քրիստոնյա աշխարհը պառակտած քրիստոսաբանական վեճերին: Թեև այդ վեճերը վերաբերում են եկեղեցու ներքին կյանքին, դրանց հետևանքները կարելի է մատնանշել և՛ քաղաքական և՛ մշակութային կյանքում և՛ ամենատարբեր բնագավառներում: Սակայն դրանք դատարկ տեղում չեն ծագել, այլ բարդ նախապատմություն են ունեցել: Ինչպես փաստում է ատենախոսը, «Եկեղեցական պատմության այս փուլում ուղղադավան քրիստոսաբանությունը դեռևս գտնվում էր կայացման փուլում, իսկ աստվածաբանական դպրոցների և անհատների քրիստոսաբանական որոնումները դեռևս ամբողջական դավանական տեսք չէին ստացել» (էջ 113):

Ներկայացված ատենախոսության մեջ մանրակրկիտ ձևով ցույց է տրված այն դժվարին ուղին, որն անցել է ընդհանրական եկեղեցին մինչև V դարի կեսերին իր դավանաբանական ձևակերպումների որոշակիացումը, որոնք խարսխված էին ոչ միայն Աստվածաշնչի տարբեր մեկնաբանությունների, այլև անտիկ փիլիսոփայական և տրամաբանական մտքի վրա:

Ուսումնասիրությունը երկարաժամկետ և խնամքով կատարված աշխատանքի արդյունք է: Այն հիմնված է առանձին աստվածաբանների, աստվածաբանական դպրոցների գրական ժառանգության, ինչպես նաև նրանց մասին իրենց ժամանակակիցների, հետևորդների ու հակառակորդների տեղեկությունների, գնահատականների (հաճախ սուբյեկտիվ) մանրազննին և անկողմնակալ քննության վրա: Հաշվի են առնված նաև արդի ուսումնասիրողների վերլուծությունների արդյունքները:

Հովհաննես Հովհաննիսյանի ուսումնասիրության առարկան մեծածավալ և բարդ բնագրեր են, որոնք նա քննել է ամենայն բարեխղճությամբ ու խորագիտությամբ՝ հմտորեն տիրապետելով այդ ծավալուն նյութի բովանդակությանը: Նա պատշաճ կերպով անդրադարձել է նաև նոր ժամանակների գիտանականների կար-

ծիքներին՝ երբեմն ցույց տալով դրանց կողմնակալությունը և առաջարկելով սեփական մոտեցումներ:

Աշխատանքում բավական հանգամանորեն է ներկայացված ու փաստարկված դավանաբանական տարբերությունը ալեքսանդրյան և անտիոքյան դպրոցների միջև, հատկապես Քրիստոսի էության և անձի միջև:

Աշխատանքը, սակայն զերծ չէ թերություններից, որոնց վրա հրավիրում ենք ատենախոսի ուշադրությունը:

Այսպես՝ անցյալի տարբեր աստվածաբանների հայացքները ատենախոսության մեջ քննվում են հիմնականում անաչառ դիրքերից, սակայն առանձին դեպքերում տեղ են գտել այնպիսի արտահայտություններ, ինչպես՝ «... փրկագործությունը... աստվածաբանների համար ածանցյալ էր համարվում գլխավորի՝ Քրիստոսի աստվածային էության նկատմամբ, հարցը լուծվում էր կողմերի «դավանական համոզմունքներին համապատասխան», որի պատճառով էլ այն սուբյեկտիվ էր և անհետևողական» (էջ 83-84): Հարց է ծագում՝ արդյո՞ք հնարավոր է պատկերացնել օբյեկտիվ աստվածաբանություն: Կամ՝ Թեոդորոս Մոպսուեստացու մասին խոսելիս հեղինակը գրում է. «Քրիստոսի անձնավորումը մեկնաբանվում է երկաստիճան երեք դեմքով. արատավոր մի վարդապետություն, որն ավելի ուշ լիովին կվերարտադրվի նեստորական քրիստոսաբանության տեսքով» (էջ 192): Մեր կարծիքով՝ ուսումնասիրողը պետք է կամ զերծ մնա նման («սուբյեկտիվ», «ճիշտ» կամ «սխալ է», «արատավոր վարդապետություն», ինչպես նաև «Նեստորի քրիստոսաբանական համակարգի արատավոր հետևանքներ», «քրիստոսաբանական թյուրըմբռնում», «խոտելի բնույթ») գնահատականներից, հակառակ դեպքում հենց առաջաբանում պիտի նշի, որ անցյալի մտածողների հայացքները քննում է իր ընդունած այսինչ՝ դիցուք Հայ առաքելական եկեղեցու դավանության դիրքերից: Կրոնագիտական վերլուծություն կատարելիս արժեր այդ ուսմունքները դիտարկել այլ տեսանկյունից, առանց մասնավոր գնահատականների, որովհետև այդ շրջանում տարբեր մեկնություններ

ու վարդապետություններ կային: Չէ՞ որ Արիոսը, Ապոլինարը, Նեստորը և մյուսները, որոնց ուսմունքներն ոչ ուղղադավան հռչակվեցին, աստվածաբանական մտքի պատմության մեջ ունեն իրենց ուրույն դերը: Ի վերջո անխուսափելիորեն հրապարակ եկած այս հակասական ուսմունքների, դրանց շուրջ ծավալված վեճերի, եկեղեցու հայրերի՝ նրանց դեմ գրված երկերի շնորհիվ է, որ ձևավորվեց և հաստատվեց «ճշմարիտ դավանանք»:

Այս ընդհանուր նկատառումից հետո նշենք մի քանի մասնավոր դիտողություն.

1. Ատենախոսության վերնագիրն ավելի ընդգրկուն է, քան աշխատանքը: Գլուխների և ենթագլուխների խորագրերից ակներև է, որ ուսումնասիրությունը վերաբերում է բացառապես նշված ժամանակաշրջանի քրիստոսաբանական ուսմունքներին (գուցե այդպե՞ս պետք էր վերնագրել): Այո, քրիստոսաբանությունը դավանաբանական համակարգում կարևորագույն տեղ ունի, այդուհանդերձ, այսպիսի վերնագիրը ենթադրում էր այդ ժամանակաշրջանում ծագած բոլոր դավանաբանական հիմնախնդիրների քննարկում և վերլուծություն, ընդ որում՝ հավասար բաշխվածությամբ: Մինչդեռ օրինակ առաջին գլխում 3-րդ դարից միանգամից անցում է կատարվում 4-րդ դարի 60-ական թվականներին, և դուրս է թողնված կարևորագույն՝ երրորդաբանական վեճերի շրջանը: Առաջին գլխի վերնագիրը՝ «Եկեղեցու ներքին կյանքը և դավանական կացությունը 2-րդ դարի երկրորդ կեսից մինչև չորրորդ դարի երկրորդ կես» ամբողջապես չի արտացոլում նրա բովանդակությունը:

2. Առաջին դարերի դավանական զարգացումներին նվիրված բաժնում ժամանակային ընդգրկումն ընդհանրական է և աղոտ, տարբեր հոսանքներ, որոնք ժամանակագրորեն հաջորդում են, ներկայացված են զուգահեռ բանավեճի մեջ: Ուստի և չնայած աշխատանքն աստվածաբանության քննություն է, ցանկալի կլիներ մի փոքր ավելի շոշափելի կերպով ներկայացված տեսնել այն կոնկրետ պատմական հանգամանքները, որոնցում գործել են քննվող հայացքների հեղինակները (առ-

նվազն պետք էր նրանց անունների կողքին նշել կյանքի թվականները): Արժեր անդրադառնալ, օրինակ, այն հարցին, թե Կ. Պոլսի և Ալեքսանդրիայի պատրիարքությունների միջև ծագած հակամարտության մեջ ինչ դեր ունեցավ 381 թ. երկրորդ տիեզերաժողովում Կ. Պոլսի՝ երկրորդ Հռոմ հռչակվելը և կարևորությամբ երկրորդը համարվող Ալեքսանդրիայի աթոռի դերի նվազումը:

Ատենախոսն ինքն էլ խոստովանում է. «ինքնին վերցրած քրիստոսաբանական վիճաբանությունների սկզբնավորումն ու ծավալումը բազմագործոն և ժամանակային բնութագրություն ունեցող շարունակական գործընթացի արդյունք է» (էջ 5), ուստի և կարող էր ավելացնել, որ այն նաև քաղաքական գործընթացների հետ է կապված, մասնավորապես՝ բյուզանդաիրանական հակամարտությանն առնչվող, և թեկուզ հպանցիկ պատմական ակնարկով ցույց տալ այդ գործընթացները պայմանավորած իրականությունը:

3. Հ. Հովհաննիսյանը պարբերաբար վիճարկում է «քաղկեդոնական հեղինակների» մոտեցումները: Օրինակ՝ «քանի որ դրանք բոլորն էլ շարադրվել են քաղկեդոնական ավանդության դիրքերից... դրանցում առաջադրված լուծումները հիմնականում աչքի են ընկնում ընդգծված միակողմանիությամբ, ինչն էլ... պայմանավորել է այդ աշխատանքների վերլուծական մոտեցումների սուբյեկտիվ բնույթը» (էջ 8): Սակայն միանշանակ չէ, որ այդ հեղինակների քաղկեդոնական դավանանքի հետևորդ լինելը պայմանավորել է նրանց սուբյեկտիվությունը: Հատկապես երբ հեղինակը շատ դեպքերում համաձայնում է այս հեղինակների հետ, օրինակ՝ ուղղակի մեջբերումներ անելով նրանցից: Առհասարակ աշխատանքը կառուցված է հիմնականում քաղկեդոնադավան հեղինակների աշխատությունների վրա:

4. Ընդհանրական եկեղեցու հայրերից, աստվածաբան հեղինակներից բազմաթիվ մեջբերումներ կան աշխատության մեջ: Դրանք թարգմանված են ոչ թե սկզբնագրերից, այլ, ինչպես և ամեն անգամ բծախնդրորեն նշվում է վկայակոչումներում, հիմնականում ռուսերեն կամ անգլերեն թարգմանություններից: Լավ կլիներ

այդ մոտեցումը հատուկ նշել աշխատանքի առաջաբանում, որտեղ ներկայացված են ուսումնասիրության աղբյուրները: Ավելացնենք, որ Հառնակի աշխատության համար վկայակոչվում է մերթ գերմաներեն սկզբնագիրը, մերթ ռուսերեն թարգմանությունը, և հասկանալի չէ, թե որից է իրականում օգտվել աշխատասիրողը:

5. Ատենախոսության մեջ կիրառված որոշ եզրեր արժե փոխարինել հայերեն ընդունված տարբերակներով: Այսպես՝ «նիկեական»-ի փոխարեն պիտի լինի «նիկիական, «ալեքսանդրիական»-ը՝ «ալեքսանդրյան», «ալեքսանդրիացի»-ն՝ «ալեքսանդրացի», «կապադովկիական»-ը՝ «կապադովկյան»: «Քրիստոսի կրքեր» ասելիս գուցե նկատի ունի չարչարանքնե՞րը (որը անգլերեն the passions of Christ արտահայտության իմաստն է, և passion բառն այստեղ «կիրք» չի նշանակում): Էջ 143-ում խոսվում է «Կ. Պոլսի 499 թ., ապա՝ Անտիոքի 508-509 թթ. սինոդական ժողովներ»-ի մասին: Հավանաբար խոսքը սինոդների՝ տեղական ժողովների մասին է: Պետք է օգտագործել ոչ թե «ավանդություն» (այսինքն՝ լեգենդ, բանավոր զրույց), այլ «ավանդույթ», եթե խոսքը տրադիցիայի մասին է:

«Որդեղություն» եզրը կարծես հեղինակն ինքն է հորինել («մարդեղություն» եզրի նմանությամբ), բայց որևէ կերպ չի բացատրել այդ փաստը, կամ եթե ինքը չէ հեղինակը, չի նշել աղբյուրը:

Տարօրինակ «տնակառույց» եզրը ռուսերեն աստվածաբանական домостроительство (= οἰκονομία) եզրի տառացի թարգմանություն է հիշեցնում. նրա փոխարեն ցանկալի կլիներ տեսնել «տնօրինություն»:

Հին հեղինակների երկերն ատենախոսը հաճախ անվանում է «վավերագրեր», ինչն արդարացված չէ, քանի որ այդ որակումը վերաբերում է բոլորովին այլ բնույթի տեքստերի՝ արխիվային փաստաթղթերին:

6. Աշխատանքում երբեմն անդրադարձ է արվում հայ աստվածաբանական մտքին, և մեջբերումներ ենք տեսնում «Կնիք հաւատոյ», «Արմատ հաւատոյ» կամ «Գիրք թղթոց» ժողովածուներից՝ առանց կոնկրետ հեղինակների նշելու: Դրա

հետևանքով հայ աստվածաբանական միտքը ներկայացվում է որպես անդեմ և անժամանակ մի զանգված: Օրինակ՝ էջ 276-ի տողատակում կարդում ենք. «Նեստորի կողմից Մարիամին մարդածին համարելը լիովին հակադրվում է հայ աստվածաբանական մտքին», և տրվում է մեկական հղում «Գիրք Թղթոց»-ին և «Կնիք հաւատոյ»-ին: Նախ Նեստորը ժամանակագրորեն չէր կարող հակադրվել դեռևս գոյություն չունեցող հայ աստվածաբանական մտքին: Նրան վերաբերող ևս մեկ պարբերություն կա ենթագլխի վերջում. «Նեստորի աստվածաբանական համակարգի ընդհանրացված գնահատականը լավագույնս տվել է հայ աստվածաբանական միտքը»: Այդ լավագույն գնահատականն ամփոփվում է «Կնիք հաւատոյ»-ից մի մեջբերմամբ, որը, ոչ ամբողջական լինելու պատճառով, թվում է թե չի վերաբերում նեստորականությանը: Հարկ էր նշել, որ այն քաղված է Բաբկեն Ա Ոթմսեցի կաթողիկոսի՝ պարսից ուղղափառներին հղած նամակից:

7. Պետք չէ ամեն անգամ կրկնել Patrologiae cursus completus. Series Graeca (accur. J.-P. Migne): Այդ մատենաշարի վերնագիրը հայտնի հապավում ունի՝ PG (և PL՝ Series Latina-ի համար), և հատորի համարը: Ի դեպ տարօրինակ է, որ 161 և 221 հատորանոց մատենաշարերն ատենախոսն անվանում է «հայրաբանական ժողովածու» (էջ 14):

8. Հունարեն և լատիներեն եզրերում, մեջբերումներում երբեմն կան տառասխալներ, իսկ հույն հեղինակների անունները ոչ միշտ են ճիշտ տառադարձված հայերեն:

Ամփոփենք. ատենախոսությունն արժեքավոր է այն առումով, որ մինչ օրս հայ իրականության մեջ հայերենով գրված առաջին աշխատությունն է այս թեմայով: Ատենախոսն օգտագործել է մեծաթիվ սկզբնաղբյուրներ և ուսումնասիրություններ, վերլուծել է տարբեր կարծիքներ, քննադատել որոշ «կարծրատիպային» դրույթներ, ներկայացրել է իր տեսանկյունները, որքանով օբյեկտիվ կդատեն աշխատանքից օգտվող ուսումնասիրողները: Այն անկասկած կարող է օգտակար լինել ինչպես

ուսանողների, այնպես էլ հայագետների համար: Այդուհանդերձ, հրատարակվելուց և գիտական հանրությանը հանձնվելուց առաջ աշխատանքն ունի վերանայման, խմբագրման, լրամշակման, կրկնվող մտքերից կամ տեսակետներից բեռնաթափման և անհաջող ձևակերպումների շտկման կարիք:

Այսպիսով, Հովհաննես Հովհաննիսյանի «Վաղ քրիստոնեական դավանաբանական վեճերի կրոնագիտական վերլուծություն (II դարի II կես – V դարի I քառորդ)» աշխատանքը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից Թ.00.05 «Կրոնի տեսություն և պատմություն (պատմական գիտություններ)» մասնագիտությամբ դոկտորական ատենախոսությանն առաջադրվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է պատմական գիտությունների դոկտորի՝ իր հայցած աստիճանին:

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
«Թարգմանական մատենագրության» բաժնի վարիչ՝
բ.գ.դ. Գոհար Մուրադյան

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
«Թարգմանական մատենագրության» բաժնի վարիչ՝ բ.գ.դ.
Գոհար Մուրադյանի ստորագրությունը հաստատում եմ

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտական քարտուղար՝ պ.գ.թ. Վ. Հ. Թորոսյան